



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 76-Ա

«26» սեպտեմբերի 2022 թվականի

գյուղ Ամասիա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ
ԼՈՒՍԻՆԵ ՀՐԱՉԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ 4 ԱՆԾԻԳ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով քաղաքացի Լուսինե Հրաչիկի Սիմոնյանի 2022թվականի սեպտեմբերի 20-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղ Ամասիա, 26-րդ փողոց , 11 շենք , 40 բնակարան հասցեում գտնվող 36,2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրատվության կարգով, անհատույց, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով օտարել այդ բնակարանի վարձակալ Լուսինե Հրաչիկի Սիմոնյանի 4 անձից բաղկացած ընտանիքին /հետագայում՝ Նվիրառու/:
2. Անշարժ գույքի նկատմամբ համասեփականատեր ճանաչել՝
Լուսինե Հրաչիկի Սիմոնյանին,
ամուսնուն՝ Աղվան Վարազդատի Բադալյանին,
աղջկան՝ Լիլիթ Աղվանի Բադալյանին,
որդուն՝ Դավիթ Աղվանի Բադալյանին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջենմա Հարությունյանին՝
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
4. Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և հրավորումների արտական գրանցման հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝8

Դեմ՝

Ձեռնպահ

- Հարությունյան Զ.
- Ղուկասյան Ա.
- Մանուկյան Ա.
- Ախգիսեցյան Է.
- Զաքարյան Հ.
- Աբրահամյան Ն.
- Մկրտումյան Ա.
- Արսենյան Զ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ. Բրյուս

Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«26» սեպտեմբերի 2022 թվականի
գյուղ Ամասիա

